

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

Միանալ ընդ Հոգին խնդրեաց, եւ այս կարի բարձրագոյն
հայցուած՝ աստուած ընդ մարդ խառնիլ:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Միջին դարերից մինչեւ ուշ միջնադար

Ներքեք չի մարել հետաքրքրութիւնը Նարեկացու եւ նրա ստեղծագործութեան նկատմամբ: «Մոգեկան հմայք մը - գրել է Գ. Խաչատուրեանը - շատ կանուխէն արդարեւ սկսած էր լուսապսակել իր անունը» (1): Նրիտասարդ Նարեկացու տաղանդի ճանաչման առաջին յայտը պէտք է համարել Վասպուրականի Թագաւոր Գուրգէն Արծրունու պատուէրը՝ գրելու Նրգ Նրգոցի նոր մեկնութիւն: Նարեկացին մեկնութիւնը աւարտել է 977 թ.: Գոհ էր արդեօք Թագակիր պատուիրատուն այդ մեկնութիւնից թէ ոչ, - դժուար է ասել: Կարեւորն այն է, որ Նարեկացին արդէն հեղինակութիւն էր նրա համար:

Ներկորդ վկայութիւնը Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի պատուէրն է՝ գրելու Ապարանից Խաչի պատմութիւնը: Բիւզանդական Վասիլ եւ Կոստանդին կայսրները ռսկեհու մի խաչ են ուղարկում Ստեփանոս եպիսկոպոսին, սրա բողոքողութիւնը Կոստանդինուպոլսում պատիւների արժանացած մի զինուորականի ձեռքով: Խաչը 983 թ. մեծ շուքով Ս. Կարապետի վանքից փոխադրում են Ապարանից վանքի Ս. Աստուածածին նորակառոյց եկեղեցին: Ստոյգ յայտնի չէ, թէ մասնակցել է արդեօք Նարեկացին այդ հանդիսութեանը (2), բայց նա ընդունել է Ստեփանոս Մոկացու պատուէրը եւ այդ գործը, ըստ Գ. Աւետիքեանի, գրել է 983 թուից մէկ-երկու տարի անց (3):

Ներկորդ վկայութիւնը Նարեկացու թուղթն է՝ յղուած Կնավա վանքի վանահօրը, ուր ընդառաջելով վանահօր խնդրանքին՝ Նարեկացին պարզաբանում է թոնդրական աղանդի գլխաւոր կէտերը եւ յորդորում պայքարել այդ աղանդի դէմ: Նշանակում է՝ Նարեկացին հեղինակութիւն էր կրօնադաւանաբանական խնդիրներում: Եւ վերջապէս, չորրորդ վկայութիւնը Մատեանի պատուէրն է, որը Նարեկացին գրել է ոչ թէ մէկ պատուիրատուի (Կինի արքայ թէ դիտապետ) առաջարկով, այլ «ի խնդրոյ հայցման հարց միանձանց եւ քաղմաց անապատականաց» (ԳՆՄՈ, 245): Որ Նարեկացին մեծ հռչակ է վայելել իր կենդանութեան տարիներին, որ նրան գովել են ու մեծարել, ակնբերել է Մատեանի ինքնաձեռագրման այն ժլատ տողերից, որոնք կենսագրական ատաղձ ունեն (Բան ՀԲ, դ): Նա ունեցել է նաեւ հակառակորդներ, որոնք չարախօսել, կշտամբել, բամբասել, հալածել են թէեւ, սակայն ոչ ոք գրաւոր քացասական խօսք չի թողել Նարեկացու մասին:

11-17րդ դարերում Նարեկացու մասին ուսումնասիրութիւն չէ գրուել: Բացի վարքից՝ յայտնի են գրիչների հարիւրաւոր յիշատակարաններ, բանաստեղծութիւններ՝ նուիրուած Նարեկացուն, մատեանի եւ մի քանի գանձերի մեկնութիւններ եւ այլն: Այդ նիւթերը ցրուած են ձեռագրերում, տպագիր հանդէսներում եւ այլուր, որոնք

մինչեւ այժմ չեն արժանացել ուսումնասիրութեան: Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութիւնը սերունդներին մատչելի է դառնում աստիճանաբար: Միջնադարն ուրոյն մեկնակէտ եւ գնահատման այլ չափանիշ է ունեցել: Այդ մեկնակէտը հիմնականում հանգում է մեղքերի խոստովանութեան, հոգու մաքրագործման եւ փրկութեան փրկատնակեան գաղափարներին: Վարքի տարբերակներից մէկի մէջ, յարասելով Մատեանի խորագիրը, այսպէս է բանաձեւուած նրա նշանակութիւնը. «Ամենայն ոք որ եւ կամեցի, սովաւ կարողացի հաշտեցուցանել ընդ ինքեան զՀայրն գթութեանց» (ԴՆՄՈ, 173): Մատեանն ընկալուել է որպէս մի երկ, որի շնորհիւ ընթերցողը կարող է աղօթել, զոջալ եւ ապաշաւել, թողութիւն հայցել եւ մաքրագործուել՝ ընդունելով քաւութեան եւ ներման շնորհը: Այս միտքը դարեր շարունակ անցել է յիշատակարանից յիշատակարան, գրքից՝ գիրք արձակ կամ չափածոյ, պարզ խօսքերով կամ նարտասանական եռիս դարձուածներով, բայց միշտ էլ դառնալով բարեպաշտական այդ առանցքի շուրջը: Մատեանն այդպէս ընկալելու հոգեւորամաղթութիւնը գալիս է Նարեկացուց: Իր գործը նա համարել է «դեղ կեանաց» մաղթանքների կտակ, որն իր ընթերցողներին կարող է ընձեռել՝

Բժշկութիւն հոգւոց եւ մաքրութիւն
յանցանաց,

Թողութիւն պարտուց եւ արձակումն
մեղաց կապանաց: (Բան Գ, գ)

Ըստ Սամուէլ Անեցու՝ Գագիկ Բագրատունու (990–1020) թագաւորութեան առաջին տասնամեակին «փայլէր իբրեւ զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին» (4): Արիստակէս Լաստիվերտցին, թուարկելով ժամանակի անուանի վարդապետներին, նկատի ունենալով Նարեկացուն՝ յիշատակում է «եւ Գրիգոր

յոյժ իմաստունն բանիւ» (5): Մատթէոս Ուռհայեցին տալիս է դարի վարդապետների աւելի ընդարձակ ցանկ՝ յիշատակելով նաեւ Անանիա եւ Գրիգոր Նարեկացիներին (6):

Նարեկացուն իբրեւ բանաստեղծի գնահատելու առաջին փորձը պատկանում է Ներսէս Լամբրոնացուն: Մատեանի ԼԳ գլխից Ս. Հոգուն ուղղուած աղօթքը, որը սկսւում է «Ամենակալ, բարեբար, մարդասէր աստուած բոլորից» տողով, Լամբրոնացին մուծել է հայոց պատարագամատոյցի իբրեւ նախերգանք: Լամբրոնացին գրել է այդ աղօթքի մեկնութիւնը, որը խիստ հետաքրքիր է կրօնաւորի հոգեբանութեան բացայայտման տեսանկիւնից եւս: Ըստ Լամբրոնացու՝ անհնարին է մեկնաբանել աղօթքի խօսքը, որովհետեւ այն ձուլուած է աղօթարարի հոգու տենչանքին: «Արդ, ո՞րպէս կարողանամք զարտասուալից հառաչումն ամենայն անձինն մեկնել կամ ուսուցանել, բայց թէ փորձիւ ոք ընդ կիրթ նորին անցեալ՝ ծանիցէ, յոր նաշակ վայելեալ, յամենայն պատրանաց աշխարհիս՝ ի ստիպոյ սրտին ողջոյն տուեալ՝ հրաժարէ, եւ միայն յայն հառաչմանէն միշտ զանձն իւր կերակրէ: Հառաչումն այն է, որ գրոց սիրոյն աստուծոյ արծարծէ, եւ արտասուքն է, իր զհոգւոյն աչս վնիտ ներգործէ: Մարմնական հառաչանք եւ արտասուքն է, իր զհոգւոյն աչս վնիտ ներգործէ: Մարմնական հառաչանք եւ արտասուքն ի հեռանալ սիրոյն եւ յանել տրտմական կրիցն՝ զօրէ, իսկ այս՝ հակառակ նմին, զի որչափ զերեսս բարձրելոյն նկատէ, եւս առաւելապէս բոցով սիրոյն հառաչէ. եւ որչափ մերձենայ ի նայ յորդառատ զգեստս արտասուաց հեղեղէ. եւ միշտ զաւուրսն՝ յորս աննաշակ ի սմանէ՝ ապաշաւէ, եւ յառաջակայն ունել զնոյն՝ աղօթէ: Այս է ուրախութիւն, որում բնաւ զոջումն ոչ տիրէ. եւ տրտմութիւն, որ զանապաշաւ

ցնծութիւն բղխէ: Ջսա ի բան ձգել եւ պատմել՝ անարգութիւն եւ շնորհին, եւ ուսմամբ զսոյն ճանաչել՝ անկարութիւն եւ լսողին» (7):

Լամբրոնացիին Նարեկացու հառաչանքի ու արտասուքի պատճառը տեսնում է աստուածային կատարելութեան նրա տենչանքի ու ձգտման մէջ: Ըստ նրա՝ Նարեկացիին տեսնում է Ս. Հոգու զօրութեան լոյսը «խոնարհեցուցանել եւ հրաշալի ազդմամբ առ ինքն ձգել», որի յայտնութիւնը հոգու մէջ ճանաչում է նրանից, որ այդ լոյսը խաղաղութիւն է աւետարանում՝ մաքրելով հոգին խոռովայոյզ տազնապնդից:

Հաղորդուել Մատեանին՝ նշանակում էր հաւատի, յոյսի եւ սիրոյ լոյս խառնել սեփական էութեանը, բարձանալ ինքն իրենից, նորոգուել հոգով: «Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն աստուծոյ յանկ ելեալ աւարտեցաւ Մատեանս աստուածային սուրբ եւ երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացոյ՝ ի խնդրոյ աստուածապատիւ սուրբ կաթողիկոսին տանս Թորգոմայ տեառն Կոստանդեայ, - գրել է Վասիլ Ուռհայեցի գրիչը 1266 թ. - քանզի տեսնալ զգեղ վայելչութեան քանիս, որ ամբարեալ կայ ի յաստուածախաւս Մատեանս. զի է սա դուռն եւ մուտ ի գաւիթս աստուծոյ, որ ի ձեռն զղջման եւ պաղատանաց արտասուաթոր աղբսարկու աղաւթից սրբոյ հաւրն Գրիգորի առնէ զմեղսամակարթ մարդիք նորոգ եւ հոգիացեալ՝ նման հրեշտակաց. զի է սա խաւսք ընդ աստուծոյ եւ կշտամբանք մեղուցեալ անձին եւ աղերս ամենայն սուրբս» (ՄՄ, ձեռ. 4965, էջ 380 ա-բ):

Դարի այս կրթուած գրչի հիմնական միտքը եւս հանգում է զղջման ու պաղատանքների միջոցով հոգին մեղքից մաքրելու բարեպաշտական պահանջին:

Թէեւ ըստ էութեան նոյն միտքն է արտայայտում նաեւ Յովհաննէս գրիչը 1286 թ. գրած իր յիշատակարանում, բայց իր գաղափարը նա մատուցում է առաւելապէս փիլիսոփայական մօտեցմամբ, քան կրօնական տեսանկիւնից: Ըստ Յովհաննէսի՝ աստուած լոյս է, եւ որքան պայծառ է այդ լոյսը մէկի մէջ, այնքան բարձր է նրա սրբութիւնը: Նարեկացիին արտափայլել է քանական այդ լոյսը, որպէս զի այն պտղաբերի մեր մէջ եւ մեմք աստուածանանք: «Ի գերունակ եւ մշտաբուժ ծաւալմանէն, որոյ անչափելի լուսոյն ճառագայթիւք եւ մերձեկայ լուսոյն անըմբռնելի, քէպէտ իմանալիք եւ հոգեղէնք հաղորդին, եւ գայս, որ արդիւնս է հասարակաց հաւանելիս, առաջի դնէ վայելչաբանիւս երկրագործն Գրիգորիս Նարեկայ, որ զքնականն արտափայլեալ պտղաբերել ի մեզ, աստուածային տեսչութեանցն ժամանել, որ ըստ գոյութեանն ճշմարտապէս լոյս է, ընթանայ եւ է եղիւս, քանզի եւ սուրբք ամենեքեան ըստ նմանութեան լուսոյ եմ պայծառացեալ, յանձինս զլոյս պատուին, որ գծածուկս քննէ աստուած եւ զիրաքանչիւր զքնութեանն զչափն ճանաչէ» (ՄՄ, ձեռ. նո. 5135, էջ 262 ա-բ):

Ի տարբերութիւն 13րդ դարի այս նոխարան գրիչների, իր միտքը գրեթէ ժողովրդական պարզ, առօրեայ եւ մատչելի լեզուով է արտայայտել Մարտիրոս գրիչը՝ 1283 թ. Խորանաշատում ընդօրինակած Մատեանի իր յիշատակարանում.

Ով որ ունի խոցուած հոգի կամ մարմինն է մեղաւք ի ի

Եւ դեղ ուզէ վասն իւր հոգոյ, աստ գտանէ զիւր պիտանի:

(ՄՄ, ձեռ. նո. 1563, էջ 336 բ)

14-15րդ դարերում աւելի է խորանում հետաքրքրութիւնը Նարեկացու նկատմամբ: Չկայ հայաբնակ մի վայր, լինի բնաշխարհիկ Հայաստանում, Կիլիկիայում, քէ գաղթա-

վայրերում, ուր յայտնի չլինի Նարեկացու անունը: Ամենուր սիրով ընդօրինակում են նրա գործերը եւ, ամենից շատ, Մատեանը: Մատեանի ընկալման մեկնակետը մնում է նոյնը, բայց նշմարում է նոր տեսանկյուն՝ ինչպէ՞ս հասկանալ Մատեանը, ի՞նչ է ցանկացել ասել հեղինակը այս կամ այն գլխում, ինչո՞ւ է հղել այս կամ այն աստուածաշնչական կերպարը եւ այլն:

1327 թ. Իտալիայի Սալեռնո ֆաղափում Մատեանն ընդօրինակել է Անդրոնիկոս ֆահանան՝ ժամանակի զարգացած հոգեւորականներից մէկը: Նրա համար եւս Նարեկացու Մատեանը «աստուածագարդ եւ հոգեպատում» գիրք է՝ գրուած Ս. Հոգու ներշնչմամբ: Նրա կարծիքով հեղինակը՝ Գրիգոր Նարեկացին՝ «զդէմս առեալ ամենեցուն՝ զարդարոց եւ զմեղաւորաց ուժգին քաղճանաւ եւ հառաչանաւ ի գորով եւ աղիողորմ քանաստեղծութեամբ զարթուցանէ զքնաւին թմբրութիւն եւ զյիմարութիւն քանդագուշեալ մտաց մերոց տեսութիւն» եւ «քազմապիսի յեղանակաւ եւ յորդորական փաջալերութեամբ կոչէ զամենեւեան յանպատում միփաբութիւն, միջնորդելով ընդ աստուած եւ ընդ մարդիկ՝ զամենեցունց ընդ իմեան վարկանելով զպարտիս, համաման գովով այնմ, որ զմեղս մեր երարձ» (ՄՄ, ձեռ. նո. 1562, էջ 28-ր- ա):

Թափանցիկ է զուգահեռը Յիսուսի եւ Նարեկացու միջեւ: Նարեկացու աստուածամանութեան իդձը Անդրոնիկոսը համարում է իրագործուած. նա միջնորդ է աստծու եւ մարդկանց միջեւ՝ իր անթերի մարդկայնութեամբ եւ աստուածային հոգու կերպարով:

Եթէ Ղազար գրիչը 1333 թ. գրած իր յիշատակարանում Մատեանի նշանակութիւնը տեսնում է այն քանի մէջ, որ նրանով կարելի է փառութիւն գտնել եւ

փրկութեան յոյս, «որով մերձենամք առ աստուած եւ մշտնջենաւորութիւն անմահական կենաց» (ՄՄ, ձեռ. նո. 2557, էջ 192 ա), ապա նոյն դարի մէկ այլ գրիչ՝ Նորոգեւը, Մատեանը բնութագրում է որպէս մեղքերի խոստովանութեան աստուածախօս մի գիրք եւ եթէ մէկը, «որպէս արժան է պաղատեցի սովաւ առ ողորմած անկոխակալ տէրն, հաւատամ ստուգապէս թեթեւանալոյ ի ծանրաբեռն կրիցն մեղանացն» (8):

Առաջին պահ թւում է երկու գրիչների մօտեցման միջեւ տարբերութիւն չկայ: Բայց դժուար չէ նկատել, որ Ղազարի հայեացքն աւելի շուտ ուղղուած է դէպի երկինք, մինչդեռ Նորոգեւինը աւելի շուտ հակուած է երկրին: Եւ առհասարակ, եթէ մի կողմից ընդգծուում է Մատեանի հոգեւոր դերը որպէս «նանապարհ կենաց, որ յերկինս տանի» (ՄՄ, ձեռ. նո. 5921, էջ 343 բ), որպէս «ստացուած պատուական եւ աստուածային եւ վերին պայծառութեանն առիթ» (ՄՄ, ձեռ. նո. 10182, էջ 209 ա), ապա միւս կողմից շեշտում է նրա գեղարուեստական ներգործութեան, քարոյափիլիսոփայութեան գործնական նշանակութիւնը: Ըստ Յովհաննէս գրչի՝ Մատեանը հոգեշահ մի գիրք է, որը կարող է լինել «մեղաւորաց՝ սփոփանք, տարակուսելոցն՝ միփաբանք, վշտացելոցն՝ միփաբանք, վշտացելոց՝ աւգնական, անգելոց՝ կանգնումըն, եւ յետ Քրիստոսի՝ լուսաւորիչ աշխարհի» (ՄՄ, ձեռ. նո. 5076, էջ 127 բ):

Յիշատակարանների մէջ իր ֆնարականութեամբ առանձնանում է Թումա գրչի յիշատակարանը՝ գրուած Վանում, 1391 թուականին: Թուման իրեն արժանի չի համարում նոյնիսկ շօշափելու, էլ ուր մնաց թէ ընդօրինակելու. «Զեռք, որ ի մեղքն շաղախի, զիա՞րդ զսա շօշափեցի»: Բայց եւ ընդօրինակում է՝ զիջելով իր ծերունի հօրեղոր՝ Սիմէոն ֆահանայի

թախանձանքին, որն իր վարպետն էր նաեւ.

Արտասուալից աղաչէր զիս, թէ՛
Կատարէ սուրբ վարդապետիս,

Խնդրեմ գգանձս հրաշալիս՝ Նարեկայ
սուրբ վարդապետիս,

Այնչափ չհանգչիմ ես աշխարհիս
յընչուր հայիմ զգիրքս ի գրկիս:

(ՄՄ, ձեռ. նո. 1874, էջ 336ա-
33-բ)

Մատեանի յուզականութեան ուժն է,
որ թոյլ է տուել մատենագիր Մատթէոս
Ջուղայեցուն Նարեկացու խօսքը բարձր
դասել սաղմոսներից. «Մին փոխ Նարեկացի
լաւ է, քան զամենայն սաղմոսս Դաւթի»
(ՄՄ, ձեռ. նո. 6607, էջ 52 ա): Ջուղայեցին
զգացել է, որ իր ժամանակի՝ 14-15րդ
դարերի մարդու հոգուն առաւել հարագատ
է Նարեկացին, քան Դաւիթը:

Նարեկացու մասին միջնադարում
պատմաբանական, բանասիրական
աշխատութիւններ չեն գրուել: Բայց, ըստ
իս, եղել են փորձեր: Այդպիսի փորձ է
Ստեփանոս Տիվրիկեցու յիշատակարանը՝
գրուած 1366 թ., Աւագ վանքում: «Ի չորք
հարիւր յիսուն եւ մի (1002 - Ա. Ղ.)
թուին ի զգիրքս արարեալ Նարեկացին
Դրիգորիոս - գրել է նա - եւ չորիւք
յեղանակաւ տանի զբանս երանեալ սուրբ
հայրս Դրիգորիոս. պաղատանաւ առ
աստուած. եւ ըստ արկածից բանսարկուին.
ձաղանաց անձին եւ յուսադրութիւն
շնորհացն աստուծոյ: Ունի խառնեալ եւ
պատմական բանս, առականորս եւ
ներքողեանս ինչ՝ խառնեալ մեկնութիւնս
եւ գոհացողականս. նա եւ իրս ինչ
խառնեալ չնչինս եւ զարմացուցիչս, արկեալ
ընդ փակիւք, յողորց սկսեալ եւ ի գոհութիւն
աւարտեալ աղաչանաւք» (ՄՄ, ձեռ. նո.
2088, էջ 4 բ):

Սա գրականագիտական նուրբ վերլու-
ծութեան փորձ է՝ մի կողմից հասկանալու
Մատեանի գործողութեան զարգացման

հոգեբանական շարժառիթը, միւս կողմից՝
բացայայտելու նրա կառուցութեան
տարրերը եւ, վերջապէս, նաեւ ժանրի
բնոյթը՝ ողբ, որն աւարտուում է
լաւատեսական յոյսի գոհաբանութեամբ:

Մատեանը մտայղացուած է որպէս
ամբողջական գործ: Նա բաժանուած է
միայն գլուխների: Բայց արդէն 12րդ
դարից յայտնի են փորձեր՝ առանձին
գլուխներ վերնագրելու՝ տարբեր
նպատակներով կիրառելու պահանջից
մղուած: Մատեանը մասերի բաժանելու
մի փորձ արուել է 14րդ դարում: Դա մի
ձեռագիր է՝ ընդօրինակուած 1369 թ.
Արտամետում, որի գրիչն է Ստեփանոս
Արտամետցին: ԼԴ գլխի Բ հատուածից
առաջ նա թողել է այսպիսի վկայութիւն.
«Դրեցաւ յերից գրոցս զմի գիրքս
առաջին» (ՄՄ, ձեռ. նո. 5889, էջ 159 ա):
Այնուհետեւ, ՀԴ գլխից յետոյ, ՀԵ գլխից
առաջ գրել է այսպէս. «Արդ, գրեցաւ
կարողութեամբն աստուծոյ երկրորդ գիրքս
սուրբ վարդապետին Դրիգորի Նարեկայ,
ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի՝
Ստեփանոսի, յիշատակ ինձ եւ ծնողաց
իմոց» (էջ 339 բ): Նշանակում է՝ Մատեանը
բաժանուել է երեք գրքերի: Սա չէր կարող
լինել Նարեկացունը: Բայց մասերի, գրքերի,
դրուագների բաժանելու այս փորձը ծագել
է Մատեանն աւելի լաւ ընկալելու
պահանջից: Զե՞ որ հայ մատենագրութեան
նշանաւոր երկերը՝ սկսած Խորենացուց,
Նիդէից, Փարպեցուց մինչեւ Յովհաննէս
Դրասխանակերտցի, Ասողիկ եւ ուրիշներ
ունեն ուրոյն կառուցութեամբ եւ երբեք չեն
կրկնում միմեանց: Թերեւս բաժանման
այդ փորձը կատարել է Մխիթար Սասնեցին,
որի ձեռագրից էլ ընդօրինակել է
Ստեփանոսը: Սասնեցին նշանաւոր
վարդապետ էր (մօտ 1260- 1337): Գ.
Աւետիքեանը ձեռքի տակ ունեցել է
մի ձեռագիր՝ գրուած 1325 թ.,
որը համեմատուած է եղել Մխիթար

վարդապետի ձեռագրի հետ՝ «առ որ յիշատակագիր համառօտ յաւելեալ ազդ առնէ՝ կարի վստահանալ ի նոյն» (9): Մատեանը Նարեկ է կոչում հաւանաբար 13րդ դարից: Նարեկացու վարքի տարբերակներէց մէկում՝ գրուած 1309 թ., ասուած է՝ «յօրինեաց գիրաշալի Գիրս աղօթից, որ յանուն տեղոյն Նարեկ կոչի» (10):

Հաւանաբար 13րդ դարում են գրուել Մատեանի եւ Նարեկացու մի քանի գանձերի մեկնութիւնները: Մատեանի մեկնութեան հնագոյն տարբերակը յայտնի է 1271 թ. ընդօրինակութեամբ (ՄՄ, ձեռ. նո. 5518, էջ 253 ա 305 բ): Ըստ գրչի յիշատակարանի՝ մեկնութեան հեղինակը Յակոբ Կլայեցի կաթողիկոսն է (1268–1288): Սա հաւանական է, քայց կարօտ է ապացուցման: Կլայեցուց բացի մեկնութիւնը վերագրուել է Ներսէս Լամբրոնացուն, Սարգիս Շնորհալուն եւ Գէորգ Սկեւռացուն: Բացառուում է Լամբրոնացու հեղինակութիւնը, քանի որ նա մեկնաբանել է միայն ԼԳ գլխի մի քանի աղօթք: Հ. Նալեանը, առանց փաստարկելու, մեկնութեան հեղինակ է համարում Սարգիս Շնորհալուն: Ինձ յայտնի է նման մի յիշատակարան՝ գրուած 1412 թ., «գլուծումն . . . արար յետոյ վսեմեմիտն եւ ճարտարաբանս Սարգիս վարդապետն ի յառաջին ձայնէ (այսինքն՝ Ձայն հառաչանաց բառերից – Ա. Ղ.) մինչ յաւարտ շնչոյն» (11): Աւետիքեանը գտնում է, որ Սարգիս Շնորհալին չի կարող լինել այդ հեղինակը: Նա 12րդ դարի հեղինակ է, ունի ընտիր ոճ, մինչդեռ Լուծմունքի հեղինակն անխտիր օգտագործել է ռամկական բառ ու բան, թուրքերէն եւ արաբերէն բառեր, ուստի «անուանակից գոյով Սարգսի»՝ կարող էր լինել 14րդ դարի Կիլիկեցի (12): Գէորգ Սկեւռացուն եւս, թւում է, մեկնութիւնը վերագրուել է առանց հիմքերի (13):

Ըստ Աւետիքեանի՝ մեկնութիւնը սակաւարժէք գործ է, քանի որ հեղինակը խրթին շատ տեղեր «կամ վեր ի վերոյ բանիւք թողու յանյայտութեան, կամ անյարմար իմաստս արտայայտէ» (14): Դժուար է համաձայնել այս գնահատականի հետ: Մեկնութիւնն ունի որոշակի գրապատմական եւ գիտական արժէք: Նախ՝ գրուած է մատչելի, պարզ եւ գրեթէ խօսակցական լեզուով, երկրորդ՝ մեկնիչը մեծ ուշադրութիւն է դարձրել խրթին բառերի բացատրութիւններին, չի տասնփելով արաբերէն եւ թուրքերէն համարժէքները տալուց, երրորդ՝ իր բացատրութիւններին մէջ նկնում է ժամանակի գիտութեան մակարդակից եւ, վերջապէս, չորրորդ՝ չի դիմում աստուածաբանական երկար-բարակ դատողութիւններին: Պատահական չէ, որ մեկնութիւնը հրատարակուել է Մատեանի տասնեակ տպագրութիւնների հետ եւ, ինչ խօսք, ծառայել է իր նպատակին: Նոյն հեղինակի նոյն մօտեցմամբ էլ մեկնաբանուած են Ս. Հոգուն, Խաչին եւ Եկեղեցուն նուիրուած գանձերը (ՄՄ, ձեռ. նո. 59 էջ 199 ա – 202 բ):

Առանձին բանաստեղծներ Նարեկացուն նուիրել են ներբողներ, տաղեր, երգեր (15):

16–17րդ դարերի կեանքի անբարենպաստ պայմանների հետեւանքով նուագում է հետաքրքրութիւնը առհասարակ մշակոյթի նկատմամբ: 17րդ դարի կեսերից նկատուում է զարթօնք: Հայերը, ինչպէս գրել է Մ. Արեղեանը, «կամ պէտք է ոչնչանային եւ վայրենանալով ընկնէին, եւ կամ եթէ ազգի մէջ կենսունակութեան դեռ ուժ կար, մեծ ջանքերով նորից ձգտէին կենդանութեան» (16): Նարեկացին դառնում է նորոգման յոյսի ու ջանքի սատար: Նորից ջանասիրութեամբ ընդօրինակում են նրա գործերը: Յիշատակարանների հեղինակները յաճախ

բառացիօրէն կրկնում են հենքին եւ միայն երբեմն-երբեմն գեղում իրենց քարեպաշտական զգացմունքները:

Այդ շրջանի յիշատակարաններից մասնակի հետաքրքրութիւն են ներկայացնում այլազգների գերութիւնից Նարեկն ազատելու մասին տեղեկութիւնները (17):

17րդ դարում հասունացաւ Մատեանը տպագրելու անհրաժեշտութիւնը: 1673 թ. Մարսելում մեծանուն Ոսկան Երեսնցին ձեռնարկեց Մատեանի տպագրութեան: Տպագրութիւնը, սակայն, մնաց թերի՝ Ոսկան Երեսնցու / 1613-1674 / մահուան պատճառով / ԳՆՄՈ, 197 /:

18րդ դարը առանձնայատուկ տեղ ունի Նարեկացիագիտութեան զարգացման մէջ: Դարամուտը բացուեց Նարեկացու մատեանի եւ նրա մի քանի գանձերի հրատարակութեամբ: Գիրքը լոյս տեսաւ 1700-1702 թթ. Կոստանդնուպոլսում (ԳՆՄՈ, 197-199): Բնագիրը տպագրութեան էր պատրաստել Երուսաղէմի պատրիարք, մատենագիր, հասարակական-եկեղեցական գործիչ Մինաս Ամդեցին (մահ. 1704): Նա բնագիրը պատրաստել էլ Երուսաղէմի ձեռագրատան մի գրչագրի հիման վրայ՝ համեմատելով էջմիածնի, Սաղմոսավանքի, Խոր Վիրապի եւ Սեւանայ վանքի հինգ այլ ձեռագրերի հետ (18):

1726 թ. լոյս տեսաւ Մատեանի երկրորդ տպագրութիւնը՝ դարձեալ Կոստանդնուպոլսում: Նախորդի համեմատութեամբ սա ունի մի քանի առանձնութիւններ. ա) բնագիրը պատրաստել են «ի բազում եւ լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբք սրբագրութեան՝ զայլ եւ այլ օրինակսն ընդ միմեանս համեմատելով» (19), բ) սրբագրել են առաջին հրատարակութեան վրիպակները, գ) լուսանցումն ընդ եւնաստուածաշնչական յղումների աղբիւրները եւ, վերջապէս, դ) աւելի շատ տեղեկութիւն-

ներ են հաղորդել կատարուած աշխատանքի մասին: Տպագրութիւնն իրականացրել են Կոստանդնուպոլսի պատրիարք Յովհաննէս Կոլոտը (1678-1741), Երուսաղէմի պատրիարք Գրիգոր Շղթայակիրը (17-18րդ դդ.), յղումները կատարել է Յարութիւն արեղան, սրբագրութիւնը, յայտնի քանաստեղծ եւ քերականագէտ Պաղտասար Դպիրը (1683-1788):

Մատեանի ընդանակութիւնը գնահատուած է զուտ միջնադարեան ոգով: Մարդ պէտք է ձգտի աստուածանալու, իսկ դա կարող է լինել ոչ այլ կերպ, «եթէ ոչ հաւատով միայն»: Եւ ապա՝ «թէպէտ յաստուածն մերձենալ հաւատով է եւ ոչ այլ իւրիք, բայց եւ հաւատոյն սնունդ՝ գործըն է, եւ գործոյն գերագոյն՝ աղօթք»: Լուսաբանելու համար այս միտքը նախաբանի հեղինակը դիմում է այսպիսի համեմատութեան. «Զի որպէս տունկ իմն տնկեցեալ ի հողոջ, եթէ ոչ ոռոգանիցի ստէպ-ստէպ եւ ոչ ներընդունիցէ զարեգական ջերմութիւն, ոչ անէ բնաւին, այլ խամրի եւ չորանայ. այսպէս եւ հաւատն առանց աղօթից ջերմութեան եւ արտասուացն ոռոգման՝ խամրանայ օրըստօրէ եւ անպտուղ լեալ՝ մեռանի» (20):

1745 թ. Կ. Պոլսում լոյս տեսաւ Յակոբ Նալեանի «Գիրք Մեկնութեան Աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» ուսումնասիրութիւնը, որը բաղկացած է՝ ա) նախադրութիւնից (էջ 1-12), բ) Մատեանի մեկնութիւնից (էջ 721-1051): Նալեանը եկեղեցական մատենագիր էր, աստուածաբան եւ քանաստեղծ: Լէօն այսպէս է քնութագրել նրան. «գրական մարդ էր եւ իրրեւ այդպիսին, շատ քեղմնաւոր գրիչ ունէր: Տարաբախտաբար, դարն այնպիսին էր, որ նրա ընդունակութիւնները պարփակուեցին միայն կրօնական նեղ շրջանակների մէջ» (21): Կրօնական ոգին էլ իր ուժեղ կնիքն

է դրել Նալեանի այդ ուսումնասիրութեան վրայ: Գիրքը բացում է մի նախադրութեամբ, ուր նա անդրադառնում է Նարեկացու կեանքին, կրթութեանը, դաստիարակութեանը, քննադրութեանը եւ այլ հարցերի: Նախադրութիւնը ոչ այնքան վերլուծական մտքի արգասիք է, որքան պաշտելի անձի ներքոյ: Նալեանի սքանչացման աստիճանը հասնում է այնտեղ, որ, հակառակ փաստերի, Նարեկացու կեանքի տեւողութիւնը հաւասարեցնում է Յիսուսի տարիքին, զուգահեռներ է տանում աստուածաշնչական կերպարների եւ Նարեկացու միջեւ: Նարեկացու ստեղծագործութիւնը Նալեանը մեկնաբանում է համափրիստոնէական հայացքների տեսագծով՝ համեմատութիւնների ու հակադրութիւնների համար դիմելով եկեղեցու հայրերի, «անտիկ» մտածողների, միջնադարի հայ եւ օտարագրի բազմաթիւ հեղինակների ամենատարբեր աշխատութիւնների: Դա չափազանց ծանրաբեռնում է Նալեանի խօսքը, շեղում բուն նիւթից: Զնայած նիւթի ընդգրկման լայնութեանը, իրականում Նալեանն ամէն ինչ մեկնաբանում է կրօնա-աստուածաբանական հայեացքով: Նրա պատկերացրած Նարեկացու համար չկայ ներքին հակասութիւնների եւ որոնումների լարուած վիճակ: Կայ սրբութեան ձգտման ծարաւ, աստուածանալու կրօնախանդ ջերմեռանդութիւն: Նալեանն իր առջեւ խնդիր չի դնում լուսաբանելու այն հարցը, թէ պատմական ու մշակութային ինչ օրինաչափութեամբ պիտի հանդէս գար Նարեկացին, ինչո՞ւ ժողովրդական քանադիւսութիւնը պէտք է ազդեր Նարեկացու ստեղծագործութեան վրայ, ինչու պիտի փոխուէր վերաբերմունքը դէպի մարդն ու բնութիւնը, դէպի եկեղեցին եւ այլն: Նալեանի համար Նարեկացին վեր է ժամանակից, պատմա-հասարակական

միջավայրից դուրս, զուտ հոգեւոր հետաքրքրութիւնների տէր բանաստեղծ, որի համար էականը առհասարակ մարդն է՝ աստծու, աստուած՝ մարդու յարաբերութեամբ: Իբրեւ գնահատման քարձրագոյն չափանիշ, Նալեանը Մատեանը համարում է համառօտ Աստուածաշունչ եւ երկրորդ Աւետարան. «Այնքան առատացաւ յարդիւնս բանից մինչ զի համարձակիմ ասել, թէ զաղօթական բանս իւր արար համառօտարան իմն Աստուածաշունչ եւ իբր երկրորդ Աւետարան» (22), Նարեկացուն՝ երկրորդ Պրովբեւս, որը «գողացեալ գիւր յաստուծոյ եւ շնորհեալ մարդկան» (23):

Նալեանի գրքի մնայուն արժէքը պէտք է տեսնել ոչ թէ նրա կրօնահայրենասիրական գաղափարների, այլ Նարեկացու ստեղծագործութեան բնագրագիտական դիտողութիւնների, բառաբացատրութիւնների, հայ մատենագրութեան հետ ունեցած առնչութիւնների մատնանշման մէջ: Նրա մի շարք դիտողութիւններ հաշուի են առել 1763 եւ 1774 թ. հրատարակութեան պատրաստողները (ԳՆՄՈ, 202-206): Իր աշխատանքի նպատակն ու խնդիրը Նալեանը բացատրել է այսպէս. «Արդ, քանզի մտաբերելով մեր, թէ ներքին գեղեցկութիւնք բանից սրբոյ վարդապետիս, բառիւք, իբր ամպովք թափուցեալք էին, վասն այնորիկ ջանացաք ձեռնարկել առ ի գրանս լուծանել» (24): Նալեանը Մատեանն ընթերցել է իր դարի ու իր սերնդի աչքերով՝ ձգտելով թափանցել նրա ներքին գեղեցկութիւնների մէջ եւ համեմատօրէն խոստովանել, թէ՛ «Ազամանդէ պալատին խցիէ դուռ շինցի» (25):

1774 թ. Կ. Պոլսում լոյս տեսաւ Մատեանի, եթէ կարելի է ասել, առաջին քննական հրատարակութիւնը (ԳՆՄՈ, 202-206): Հրատարակչները բնագիրը պատրաստել էին՝ օգտագործելով շուրջ

երեք տասնեակ ձեռագրեր: Տպագրութիւնն իրականացնելով «համեմատութեամբ հնագոյն եւ ընտիր ձեռագիր օրինակաց» (26), նրանք սրբագրել են բազմաթիւ սխալներ, վերանայել մի քանի գլուխների կարգը, ճշտել կետադրութիւնը, հաշուի առել Նալբանի առանձին դիտողութիւններ եւ այլն: Գիրքն ունի գլխաւոր տարբերութիւնների ցուցակ, խրթին բառերի բացատրական բառարան, վարքի մի տարբերակը, որը, ինչպէս կարծում է Պ. Խաչատրեանը, «ըստ երեւոյթին նոյն ժամանակ էլ յօրինուել է» (ԳՆՄՈ, 203):

Նարեկացու կեանքին ու գործին անդրադարձել է նաեւ պատմաբան Միքայէլ Զամչեանը (1738–1823): Նա ամփոփել է այն ամէնը, ինչ յայտնի էր Նարեկացու վարքից, յիշատակարաններից, աւանդազրոյցներից: Նարեկը նա համարում է եզակի ստեղծագործութիւն, որի նմանը «Ցարդ չերեւցաւ յաշխարհի» (27):

Նարեկացիագիտութեան այս փուլի բարձրագոյն մակարդակը հանդիսացաւ Գաբրիէլ Աւետիքեանի (1750–1827) վաստակը: Նա նոր աստիճանի բարձրացրեց 18րդ դարի թէ՛ բնագրագիտական եւ թէ՛ մեկնաբանական աշխատանքը: 1801 թ. Վենետիկում լոյս տեսաւ Մատեանը՝ Աւետիքեանի մեկնութիւններով: Ընթերցողներին ուղղած իր խօսքում Աւետիքեանը Նարեկացուն ներկայացնում է 18րդ դարի կրօնա-հայրենասիրական մեկնակէտից: Յունաստանը հպարտ է, որ Հոմերոս ունի, Իտալիան՝ Վերգիլիոս, մինչդեռ «վեհ քան գնոսա առ Հայաստանեայս ծագեաց երանաշնորհն Գրիգորիոս, որ գիտաց զապստամբ հոգին բանաստեղծութեան հնազանդել ընդ թեւօք աստուածայնոյ հոգւոյն» (28) – գրել է Աւետիքեանը:

Աւետիքեանը քննադատաբար է մօտեցել հին լուծմունքներին: Գնահատելով, որ Նալբանը մեծ ծաւալի ծանր գործ է

կատարել, նա միաժամանակ նշում է այդ գործի հիմնական թերութիւնը. «բայց ընդարձակութեամբն յայլ խօսս վարդապետականս՝ ոչ ժամանեալ տալ զնշարիտ տեղեկութիւն առաջի եղելոց բանիցն» (29):

Աւետիքեանն իր աշխատանքի ելակէտն ու նպատակն է համարել բնագրի ստուգութեան խնդիրը. «առ ի գիտ հարագատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է խնդրելի» (30): Այս դրոյթը այսօր մնում է բանասիրութեան առաջին պատուիրանը: Մատեանը, ինչպէս նաեւ մի քանի ներքոյներ Աւետիքեանը մեկնաբանել է հետեւեալ սկզբունքներով. ա) բարդ բառերի բացատրութիւններ, բ) լեզուա-ոճական եւ այլ խրթին արտայայտութիւնների, շարահիւսական դարձուածների եւ աստուածաբանական հասկացողութիւնների բացատրութիւններ, գ) բովանդակութեան մեկնաբանութիւններ: Աւետիքեանը բառարանագիր էր, եւ չկայ բարդ, խրթին, հագուագիտ մի բառ, որին անդրադարձած չլինի ծանօթագրութիւնների մէջ կամ վերջընթեր բառարանում: Բնագրագիտական ոչ մի վիճելի խնդիր, տարակուսելի ոչ մի հարց ու կէտ չի վրիպել նրա հայեացքից: Հետագայ բոլոր հետազօտողների համար Աւետիքեանը եղել է մնում է հեղինակութիւն:

Աւետիքեանի համար եւս Նարեկացու ստեղծագործութիւնն անսպառելի է: Ասպարէզը մնում է ուրիշներին՝ յաջորդ սերունդներին: Նա հետնորդներին է պատգամել թէ՛ իր վաստակի եւ թէ՛ նրանց ապագայ աշխատանքի գնահատման այս չափանիշը. «սքանչելարուեստ Մատենիս բարձրութիւն կամ խորութիւն գերազանց է միշտ, քան զլար չափողի» (31): Սա պէտք է իմանալ Նարեկացու մասին գրելուց առաջ: Գրելուց յետոյ՝ պիտի խոստովանել դա:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂՐԻԻՐՆԵՐ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլուխ Երկրորդ - Ա.

1.- Նարեկ. Մատեան ողբերգութեան Ա. Գրիգորի Նարեկացիի, գրաբար բնագրի հանդիպադրութեամբ աշխարհաբարի վերածնեց Գարեգին Նպիսկոպոս Տրապիզոնի, Բուենոս Այրես, 1948, էջ Ժէ:

2.- «Եւ եղև անդ անպայման խնդութիւն ժողովոյնցն առհասարակ, - գրում է Մ. Զամչեանը, - յորոց մի էր եւ պատմագրողն այսոցիկ սուրբն Գրիգոր Նարեկացի՝ հանդերձ հարազատ եղբարք իւրով Յովհաննու, որ էր ի մմին ժամանակի վանական Նարեկայ վանից, եւ իմքմ Գրիգոր կարգեալ էր ի վարժապետութիւն միանձանց» (Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 857):

3.- Նարեկլուծ, էջ 424, ծնթ. 7:

4.- Սամուէլի ֆահանայի Անցւոյ Հաւաքումն էր գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

5.- Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտոյ, աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզբաշեանի, Երեւան, 1963, էջ 26 եւ 154:

6.- Մատթէոս Ուտայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 179:

7.- Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւն Խորհրդոյ Պատարագին, Վենետիկ, 1847, էջ 255:

8.- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր Նպս. Պողարեան, հ. Ե. Երուսաղէմ, 1971, էջ 21:

9.- Նարեկլուծ, էջ Ժ:

10.- Յայսմաուրբ ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմաուրաց Տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834, Յառաքրան, եւ էջ 99: Տես նաեւ՝ ԳՆՄՈ, էջ 180:

11.- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր Նպս. Պողարեան, հ. Դ. Երուսաղէմ, 1969, էջ 389:

12.- Նարեկլուծ, էջ Թ:

13.- ԳՆՏԴ, Ներածութիւն, էջ 9:

14.- Նարեկլուծ, էջ Ը:

15.- Գրիգոր Խաթեցի (1349-1425) Նարեկացուն դրուատել է այսպէս.

Որպէս զարեւն ի յաստեղաց՝ էր նա ի մէջ վարդապատաց,

Բամից հանուրց հոնտորաց եւ քանիքուն գիտնականաց: (ՄՄ, ձեռ. նո. 1573, էջ 6 ք)

Առաքել Սիւնցեմ (1350-1425)՝ այսպէս.

Յանեղ լուսոյդ լոյս կոչեցար, յաշտանակի մարմնոյդ եղար,

Յեկեղեցւոյ ջահ վառեցար, խաւար հոգւոց դու լուսարար: (ՄՄ, ձեռ. նո. 2088, էջ 339 ա)

Յակոբ Նալբանը (1704-1764)՝ այսպէս.

Սանդուղ բրկնահաս՝ առ աստուած ելման,

Ի հեղեղաց մեղաց՝ գերծուցիլ տապան:

(Մեկնութիւն աղօթից. էջ 17)

16.- Մ. Արեղեան, Երկեր, հ. Դ. Երեւան, 1970, էջ 511:

17.- Այդպիսի մի յիշատակարան բողբ է Սեբաստիայի եպիսկոպոս Մելիսեթը՝ 1602 թուականին. «Որ տեսի զայս աստուածաշունչ մատեանս ի ձեռն այլասեռից, որ կարի անդէպ եւ անխմամ շօշափէին եւ

ի ձեռնաւ ի ձեռն տային կատակելով: Եւ իմ տեսեալ զայս մատեանս ի ձեռն հեմից ասպատակողաց, եւ փաղաքանաւ ժտեցայ, մինչ զի կամք արարիմ տալ ինձ զայս, ապա սակաւ ինչ ի յանցաւորէս գին տուեալ սմա եւ գնեցի զանգին մարգարիտս, որ էր խախտեալ եւ տերետեալ եւ անսգամ մարդոյ հանդիպեալ, որ զայս լուսատու նրագիս զակն խաւարացեալ էր . . . Այլ ես անարժան ծառայս . . . Մեկեւտե՝ Նպիսկոպոս Սեփաստիացի . . . կրկին նորոգեցի զսայ գտեղ-տեղ ուսայելով եւ գտեղ-տեղ սպունկով լուսնալով՝ ահիւ եւ դողութեամբ, վասն զգիրն ոչ եղծեալ աղագաւ . . .» (ՄՄ, ձեռ. նո. 1875, էջ 228 ք - 229 ա):

Ահա մէկ այլ յիշատակարան՝ գրուած 1776 թուականին: «Արդ, թուական Հայոց էր ՌՄԻԵ (1225+551=1776), որ հազարացիք գնացին յերկիրն Ռշտոնեաց առ ի Թալանել. գերկիրն ամենայն աւար էարկ եւ արար աւերակ, եւ մանաւանդ ի սուրբ ուխտն Նարեկայ: Բազում Թալան բերեալ էին ընդ ինքեանց. ի քաղմաց միմն ի այս սուրբ Նարեկացուն աղօթագիրքս է: Ոմն անուճ Կարապետ, որ մականուն Խոզեղա ասի, իբր քէ Աստուածատուր Բարգմանի, սայ իւր հալալ արդեանց, այսինքն իւր վաստակն արծաթէն տուաւ զայս գիրքս ազատեաց ի ձեռնաց անօրինաց, եւ ապա կրկին յիշվ (նուէր, ընծա - Ա. Ղ.) արար սուրբ Նարեկայ գերեզմանին՝ յիշատակ իւր ծնողացն Դուանին եւ մօրն Աղաբէկուն, կողակցուն՝ Սուլքանին եւ իւրեանց տանց մեծի ու փոքու. միշտ՝ ամէն» (ՄՄ, ձեռ. նո. 57, էջ 271 ք):

18.- «Արդ, ես՝ տէր Մինաս արհիեպիսկոպոս եւ պատրիարք սրբոյ Երուսաղէմի, որ ի վիճակին Հայոց, ի կանուխ ժամանակաց ունեւով փափաք ընդ աստուածային գրոցս այսմիկ՝ միշտ եւ ամենայն ուրեք միխիթարէի սովաւ: Իսկ ի չուելն իմ ի սուրբ Երուսաղէմ ի թուին ՌՃԽ (1691) գտի անդ եւս զքանա աղօթից սրբոյ Նարեկացւոյն այլ եւս գլուխս եւ (5) որպէս տեսանի ի վերջն գրէոյս այսմիկ: Եւ զկնի ամաց ի գնալն իմ ի սուրբ աթոռն էջմիածին՝ ի նորին գրատանէ, Սաղմոսավանից, ի Խոր վիրապէ եւ ի Սեւանու անապատէ ետու բերել զհինգ գիրք Նարեկի եւ սկսայ սրբագրել զսա քաղում զգուշութեամբ՝ այսինքն զաղալեցեալսն ի գրչաց ուղղագրեցի ի հնգից օրինակէ» (Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ արարեալ, Կ. Պոլիս, 1700-1702, Յիշատակարան, էջ 35Ա):

19.- Գիրք աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հոնտորի, Կ. Պոլիս, 1726, էջ ՆԻէ:

20.- Նոյն տեղում, էջ 2-3:

21.- Լէօ, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1973, էջ 454:

22.- Լ. Նալբան, Մեկնութիւն աղօթից, էջ 5:

23.- Նոյն տեղում, էջ 6:

25.- Նոյն տեղում, էջ 15:

23.- Նոյն տեղում, էջ 720:

26.- Նարեկ. Գիրք աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հոնտորի, Կ. Պոլիս, 1774, էջ 7:

27.- Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ. էջ 853:

28.- Նարեկլուծ, էջ Դ:

29.- Նոյն տեղում, էջ Է:

30.- Նոյն տեղում, էջ Ժ:

31.- Նոյն տեղում, էջ ԺԲ: